

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ագրոպարենային համակարգում առկա շատ խնդիրներ, լուծումներ չստանալով, վեր են ածվել զարգացմանը խոչընդոտող գործոնների: Այն օրինաչափորեն իր խորքային ազդեցությունն է ունենում գյուղատնտեսությունում տնտեսավարող հիմնական սուբյեկտ՝ առաջնային արտադրական միավորներ հանդիսացող գյուղացիական տնտեսությունների գործունեության, ինչպես նաև՝ մրցունակության վրա: Գյուղական վայրերում սոցիալական, արտադրական և ֆինանսական ենթակառուցվածքների անհամապատասխանությունը, օգտվելու դժվարությունները, տեղեկատվության, խորհրդատվության, գիտելիքի, ռեսուրսների և ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների, տեխնիկայի ձեռքբերմամբ պայմանավորված ու արտադրված արտադրանքի իրացման քրոնիկ դարձած բարդությունները չեն նպաստում գյուղացիական տնտեսությունների մրցակցային հնարավորությունների բացահայտմանը և հետևապես՝ մրցունակ լինելուն: Գյուղացիական տնտեսությունների օպտիմալացման և կայացման գործընթացի դանդաղումը, զարգացման տնտեսական ու իրավաօրենսդրական կանոնակարգումների բացերն ունեցել են, ունեն և առաջիկայում էլ կունենան որոշիչ ազդեցություն ՀՀ գյուղատնտեսությունում լիրաժեք բարեփոխումների և պարենային ինքնապահովման մակարդակի վրա:

**«ՀՀ-ում տարածաշրջանային ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգերի կատարելագործումը և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ առաջնային արտադրական միավորումների մրցունակության բարձրացումը»** ծրագիրն իրականացվել է հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան<sup>1</sup>:

**1. Տարածաշրջանային ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպական և տնտեսական կառուցակարգեր հասկացությունները** – Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգը վարչական, տնտեսական, իրավական ազդեցության լծակների և արտադրական գործընթացների կազմակերպման ձևերի համախումբ է: Միաժամանակ այն որոշակի մեթոդների և լծակների կիրառությամբ պետական ինստիտուտների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կառավարման և վերահսկողության համակարգ է, ինչի միջոցով ապահովվում է տնտեսության ագրարային ոլորտի արդյունավետ գործունեությունը և պարենային անվտանգության կայուն համակարգերի ձևավորումը:

Միջազգային մասնագիտական գրականության ուսումնասիրությունների շրջանակներում առանձնացվել են ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպական, տնտեսական կառուցակարգերի հասկացության տարբեր մեկնաբանումներ, որոնց ընդհանրացմամբ մշակվել է ագրոպարենային համակարգի կառուցակարգի հետևյալ սահմանումը՝ **ագրոպարենային համակարգի կառավարման կառուցակարգն առկա համակարգի և դրա ենթահամակարգերի փոփոխության անընդհապ և համակարգված գործընթաց է, որը ելնում է կառավարման խնդիրների նպատակային և համալիր լուծման անհրաժեշտությունից, ինչպես նաև՝ ագրարային ոլորտի արդյունավետ գործառնության և հեղափոխական զարգացման օբյեկտիվ պահանջներից:**

<sup>1</sup> Հետազոտական կենտրոնում առկա է նաև հաշվետվության ընդարձակ տարբերակը, որտեղ մանրամասն ադրադարձ է կատարված ներկայացվող հարցերին:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կիրառման նպատակները և խնդիրները հանգում են հետևյալին՝ արտադրանքի թողարկման ծավալների աճ, պարենային համակարգերի ապահովում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում, ագրարային ոլորտի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակի բարելավում, գյուղական տարածքների կայուն զարգացում, ոլորտի ներդրումային գրավչության բարձրացում, նորարարությունների կիրառում և այլն:

Ագրարային հատվածի պետական կարգավորումը զարգացած երկրների մեծ մասի ագրարային քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է: ՀՀ-ում պետական կարգավորման կառուցակարգեր մշակվում և կիրառվում են Էկոնոմիկայի նախարարության կողմից, որի գլխավոր նպատակն է ոլորտային գորառույթների արդյունավետ կառավարումը:

ՀՀ-ում միասնական ագրարային քաղաքականությունը կարող է հիմնվել այնպիսի բաղադրիչների վրա ինչպիսիք են՝ ուղղակի վճարումները գյուղացիական տնտեսություններին, ինչը կբերի դրանց կայունացմանը, արտադրության շահութաբերության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակավայրերի զարգացմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ տնտեսությունների մրցունակության, կյանքի որակի բարձրացումը և այլն:

ՀՀ ագրոպարենային համակարգի պետական կառավարման համակարգն ունի 3 մակարդակ՝ որպես կենտրոնական լիազոր մարմին հանդես է գալիս Էկոնոմիկայի նախարարությունը, տարածքային մարմին՝ մարզպետարանները (համապատասխան գերատեսչություններով), իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դերում՝ համայնքները՝ համայնքապետի գլխավորությամբ:

ՀՀ-ում ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգերն արդյունավետ կլինի մշակել հետևյալ փուլերով՝

- ✓ ագրոպարենային համակարգի զարգացման նպատակների և խնդիրների հստակ ձևակերպում,
- ✓ նպաստավոր ինստիտուցիոնալ դաշտի ձևավորում,
- ✓ ագրոպարենային համակարգի կառավարման վրա ազդող հիմնական գործոնների առանձնացում,
- ✓ ագրոպարենային համակարգի զարգացման հնարավոր տարբերակների կանխատեսում,
- ✓ ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կատարելագործման հիմնական ուղղությունների սահմանում և հիմնավորում,
- ✓ ինստիտուցիոնալ և կազմակերպչական կարգավորման իրականացում:

Հետագոտական խմբի կողմից մշակվել է ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպակառավարման համակարգի սխեմա:

ՀՀ Կառավարության կառուցվածքում Գյուղատնտեսության նախարարության բացակայության պայմաններում ագրարային ոլորտի կառավարման գործում բնականաբար գերակա դրական տարրություն պետք է ստանձնեն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, տարածաշրջանային (մարզային) կառավարման և հատկապես տեղական ինքնակառավարման մարմինները՝ հանձնիս «Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պաշտպանության» վարչության: Վերջինս համայնքապետարանի հետ միասին իրենց վերապահված ընդլայնված լիազորությունների շրջանակներում

կհամակարգեն տարածաշրջանային ագրոպարենային հատվածի գործունեությունը, այդ թվում՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների և այլ տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները:

Կազմակերպակառավարման համակարգում ակտիվ մասնակիցներ կարող են հանդիսանալ մասնագիտացված սպասարկող ծառայությունները, ֆինանսական, հասարակական կազմակերպություններն ու միավորումները, ինչպես նաև՝ գիտական կառույցները:

Առանձնահատուկ կարևորություն պետք է վերաստանձնի «ԱԿԲԱ» կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ-ն, որն առաջատարն է ոլորտի վարկավորմամբ և պետք է ձգտի զբաղեցնել «շուկայի» ավելի քան 50 տոկոսը: Մյուս բանկերին ևս պետք է խրախուսել գյուղական տարածաշրջաններում և գյուղատնտեսությունում գործունեության ընդլայնումը:

ՀՀ ագրոպարենային համակարգի գիտակրթական ապահովման գործում կարևորվում է ՀԱԱՀ-ն և մի շարք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնց գործունեությունն իրավաօրենսդրորեն արմատական վերափոխման կարիք ունեն:

Հասարակական կազմակերպություններն ու միավորումները կոնկրետ նպատակային ուղղվածություն և ֆինանսավորում ունեցող կառույցներ են, որոնց գործունեությունը միտված պետք է լինի ագրարային ոլորտում թիրախային խնդիրների լուծմանը և տնտեսավարող սուբյեկտների ու կառավարման մարմինների միջև երկխոսության ծավալմանը:

Որոշակի ուշադրության կարիք ունեն մասնագիտացված սպասարկող ծառայությունների գործունեությունը՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական մասնակցությամբ կառույցները: ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն ունենալով նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման, սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում իրականացվող աշխատանքների պլանավորման, համակարգման գործառույթներ՝ իրավմամբ պետք է մշտական երկխոսության օղակ հանդիսանա արտադրողների և սպառողների միջև:

**2. ՀՀ ագրոպարենային համակարգում կազմակերպատնտեսական համակարգերի անհամամասնությունները** - Ընդհանուր առմամբ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրներն իրենց ազդեցությունն են ունենում երկրի տնտեսության, այդ թվում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման և ընդհանուր զարգացման վրա: Գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունն ուղիղ համեմատական է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեության հետ: Սակայն վերջիններիս գործունեության արդյունավետության գնահատման ընդհանուր մեկ ցուցանիշ որպես այդպիսին առկա չէ, քանի որ դրանց գործունեության արդյունքը բազմաբնույթ ծառայությունների ամբողջություն է, ինչն անհնար է արտահայտել միասնական ցուցանիշով: Ներկայիս կազմակերպակառավարման համակարգի գործունեության կարելի է գնահատել 3 ուղղությամբ՝ առկա կառուցվածքի համապատասխանությունը գործառույթներին, գործառույթների իրականացման աստիճանը և ստացված արդյունքների համապատասխանությունը ծախսերին:

Պետական կառավարման համակարգում իր ուրույն տեղն ունի գործադիր իշխանությունը, որին վերաբերում են պետական կառավարման գործառույթների մեծամասնությունը, որը նաև ճկուն հատվածն է ու առավել հաճախ է ենթարկվում բարեփոխումների: Այլ հարց է, թե որքանով են արդարացված այդ փոփոխությունները:

Նմանատիպ փոփոխությունների վառ օրինակ էր 2019թ. Գյուղատնտեսության նախարարության միավորումը Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը, որոնց հենքի վրա ձևավորվեց Էկոնոմիկայի նախարարությունը: Նման կառուցվածքային փոփոխությունները կարող են հանգեցնել ինչպես անհրաժեշտ գործառույթների կատարման անտեսման, այնպես էլ կրկնությունների, ոչ հստակ տարանջատումների, որոնք, բնականաբար, ֆինանսական և գործառույթային կատարողական բացասական ազդեցություն կունենան: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, նախարարությունների մակարդակով նման փոփոխականությունն առաջացնում է կազմակերպական բազմաթիվ դժվարություններ, ուստի, անհրաժեշտ է վերանայել ճյուղային միավորումները և իրականացնել ներքին կառուցվածքային գործառույթային փոփոխություններ: Ներքին կառուցվածքային փոփոխության վառ օրինակ էր Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության վերակազմավորումը, որի փոխարեն այժմ գործում է Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչությունը: Փոփոխության արդյունքում ՀՀ մարզերում գործող խորհրդատվական բաժինները փակվեցին, իսկ տնտեսավարողները մնացին առանց պետական մակարդակով տրամադրվող խորհրդատվության: Չնայած Էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպվող մարզային այցելությունների, տնտեսավարողների կողմից բարձրացված խիստ մասնագիտական հարցերը հիմնականում այդպես էլ մնում են անպատասխան: Արդյունքում տնտեսությունները վարվում են սեփական կամ հարևան ֆերմերների փորձի հիման վրա կամ խորհրդատվություն են ստանում պարարտանյութեր և թունաքիմիկատներ վաճառող կազմակերպություններից, որը շատ հաճախ խոչընդոտում է գյուղատնտեսության արդյունավետ կազմակերպմանը և բացասաբար անդրադառնում մրցունակության վրա: Տարեկան 1-2 այցելությունները բավարար չեն խորհրդատվության կազմակերպման և կայուն գյուղատնտեսության զարգացման համար:

ՀՀ ագրոպարենային համակարգում կազմակերպատնտեսական կառուցակարգերի անհամամասնությունները բացահայտելու նպատակով հետազոտական խմբի կողմից ուսումնասիրվել են ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում մարզպետի աշխատակազմի «Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության» վարչությունների հիմնական գործառույթները, որից ակնհայտ է դարձել, որ, որպես կանոն, մարզային կտրվածքով առկա են համապատասխան օրենքներով սահմանված և փաստացի իրականացված գործառույթների կատարման, արդյունքային մասնակցության միջև անհամապատասխանություններ: Այսպես, մարզպետի աշխատակազմի «Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության» վարչության գործառույթներում առկա են հստակ ռեսուրսային, աշխատանքային, ֆինանսական ապահովման անհամամասնություններ: Առավելապես նկատվում է օրախնդիր, հանձնարարականների կատարման և ժամանակային բնույթի աշխատանքներ, քան օրենսդրորեն վերապահված գործառույթների իրականացում:

Բացի պետական կառավարման մարմինների գործունեությունից գյուղատնտեսության զարգացման վրա իր էական ազդեցությունն է թողնում տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) գործունեությունը: Վերջիններս ինքնուրույն են իրենց գործունեության մեջ, պետական կառավարման մարմինների ստորադասը կամ ենթակա մարմինները չեն համարվում: Իրենց գործունեության ընթացքում ՏԻՄ-երը տարբեր փոխհարաբերությունների մեջ են պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների հետ: ՀՀ Սահմանադրությամբ

ամրագրված է մարզերում պետական կառավարման և մարզի վարչական տարածքի համայնքներում տեղական ինքնակառավարման համադրմամբ իրականանում են անմիջական փոխհարաբերությունները ՏԻՄ-երի և գործադիր իշխանության միջև, կարգավորվում խնդիրների շրջանակները, ոլորտներն ու բնույթը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների կարևորագույն որոշիչներից են պատվիրակված լիազորությունները, որոնց իրականացումը պետությունը վերապահում է համայնքներին: Պետական մարմինների լիազորությունների իրականացումը կարող է փոխանցվել համայնքներին, եթե վերջիններիս կողմից դրանց իրականացումը կարող է ավելի արդյունավետ լինել: Դրանք իրականացվում են օրենքներով կամ կառավարության կողմից սահմանած կարգով: Պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պարտադիր պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեի միջոցներից:

Լիազորությունների պատվիրակումից բացի, գործադիր իշխանությունը քաղաքականություն մշակելիս համագործակցում է ՏԻՄ-երի, ինչպես նաև մարզպետարանների հետ՝ տարաբնույթ հանդիպում-քննարկումների, պաշտոնական գրությունների, համայնքային այցելությունների միջոցով: Ինչպես նաև, գոյություն ունեն որոշակի խնդիրներ, որոնք ՏԻՄ-երը կարող են լուծել միայն պետական լիազորված մարմնի համաձայնությամբ: Ֆինանսների, քաղաքաշինության և հողօգտագործման, հասարակական կարգի պահպանության, տրանսպորտի և օրենքով սահմանված մյուս բնագավառներում պետության պատվիրակված մի շարք լիազորությունները համայնքի ղեկավարն իրականացնում է ոչ միայն օրենքով, այլև կառավարության սահմանած կարգին, չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Պետական կառավարման և ՏԻՄ-երի կապի կարևոր շրջանակն առնչվում է ֆինանսական և բյուջետային հարցերին, որոնք կարծես պահանջում են առավել առանձնահատուկ փոխհարաբերություններ համայնքների խոշորացման պայմաններում՝ պայմանավորված գյուղատնտեսության ոլորտում իրականացվող որոշ պետական աջակցության ծրագրերով:

Չնայած վերոնշյալ փոխհարաբերությունների շրջանակին, կարծում ենք, որ ագրարային ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում պետք է ընդլայնել ՏԻՄ-երի ընդգրկվածությունը, դերակատարությունը, քանի որ այն առաջին օղակն է, ում հետ գյուղատնտեսությունում տնտեսավարողները, առավել ևս փոքր գյուղացիական տնտեսությունները կարող են առնչվել:

**3. ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպատնտեսական կառավարման օղակների միջև փոխհարաբերությունների վերլուծություն** – ՀՀ-ում ագրարային ոլորտի կազմակերպատնտեսական կառավարման ներկայիս համակարգը գործում է ցածր արդյունավետությամբ՝ կախված կազմակերպական, կառավարման, տնտեսական, ֆինանսական և այլ գործոններից: Հախուռն են գործում գյուղատնտեսական արտադրանքի գնման, վերամշակման և արժեշղթաներում ներառված ենթակառուցվածքներն ու օղակները:

Արժեշղթաների մանրամասն ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ ՀՀ-ում և հատկապես Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում ագրոպարենային համակարգում առկա են կազմակերպատնտեսական կառավարման համակարգի անհամամասնություններ: Նշվածով պայմանավորված՝ առանձնացրել ենք կազմակերպատնտեսական կառավարման համակարգում գործող դերակատարներին ըստ հատվածների՝

## **գործադիր մարմին – շուկա – արտադրություն - վերամշակում, միջնորդներ - աջակցող կառույցներ:**

ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպատնտեսական կառավարման համակարգի դերակատարների միջև փոխհարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ սուբյեկտների փոխգործակցությունը հիմնականում չկանոնակարգված է և կրում է հախուռն բնույթ, որն առաջացնում է խնդիրներ, ինչպես վերահսկման, տնտեսական գործունեության գնահատման, այնպես էլ առաջացած խնդիրների արդյունավետ և համապարփակ լուծումների ապահովման գործում, որն էլ իր հերթին չի նպաստում տնտեսությունների մրցունակության և ինտեսիվության մակարդակի բարձրացմանը, ներդրումային գրավչությանը, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների բարձրացմանը, ինչպես նաև պետություն-գիտություն-արտադրություն համագործակցության ամրապնդմանը:

Կազմակերպատնտեսական կառավարման համակարգի կառուցակարգերը պետք է միտված լինի ագրոպարենային համակարգի բիզնես-կառույցների ներգրավմանը և դրանց գործունեության օպտիմալացմանը (ավելացված արժեքի ստեղծում, ներմուծման փոխարինում, արտադրության տեղայնացում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում)<sup>2</sup> ի հաշիվ պետություն-մասնավոր գործընկերության ամրապնդման և մասնավոր ու օտարերկրյա ներդրողների մասնակցության, արդյունքում ունենալով պարենային արժեշտիների երկայնքով բոլոր օղակների մրցունակության խթանում ու նորարարական ներուժի արդյունավետ օգտագործում, փոքր և միջին բիզնեսի զարգացում:

Ագրոպարենային համակարգի կազմակերպատնտեսական կառավարման համակարգի սուբյեկտների արդյունավետ փոխհարաբերությունների գնահատման նպատակով մշակվել է գնահատման մեթոդ, որտեղ ընդգրկվել են կազմակերպատնտեսական կառավարման համակարգի վրա ազդող կազմակերպական և տնտեսական տարածաշրջանային (մարզային կտրվածքով) 12 գործոն: Գնահատման ձևաթղթում կարևորվել է յուրաքանչյուր գործոնի կշռային գնահատականները (կարևորության աստիճանը) և տրվել գործոնների ազդեցությունը (ցածր, միջին, բարձր) համակարգի վրա<sup>2</sup>:

Մարզային կտրվածքով մշակվել է կազմակերպատնտեսական կառավարման համակարգում ներառված օղակների համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքները.

- կազմակերպչական և տնտեսական մեխանիզմի հարմարեցում տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնների անընդհատ փոփոխվող պայմաններին,
- կայուն համագործակցություն բոլոր սուբյեկտների միջև, որը պետք է ամրագրված լինի պայմանագրերի և/կամ համաձայնագրերի միջոցով,
- սուբյեկտների գործունեության համապատասխանություն պետության կողմից իրականացվող ագրարային քաղաքականության ուղղություններին,
- հիմնական տնտեսական օրենքներում ամրագրված սկզբունքների պահպանում և այլն:

Մեր գնահատմամբ, ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպատնտեսական կառավարման օղակների համագործակցության, փոխկապակցվածության և արդյունավետության բարձրացումը կնպաստի ներդրումային գրավչության

<sup>2</sup> Եթե ընդհանուր կշռային միավորների գումարը կազմում է 1-30, ապա նշված գործոններն ունեն ցածր 31-69 միջին, 70-100 բարձր ազդեցություն: Մանրամասնությունները ներկայցված են հաշվետվության ընդարձակ տարբերակում:

բարձրացմանը՝ արտադրանքի արտադրության, գյուղացիական տնտեսությունների գործունեության դիվեսիֆիկացմանը և մրցունակության բարձրացմանը, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, կադրերի մասնագիտական գիտելիքներով ապահովմանը, տեղեկատվության հասանելիությանը և լրացուցիչ շուկաներ գտնելու հնարավորությանը, ինչպես նաև՝ մասնագիտացման խորացմանը, ներդրումային և այլ ռիսկերի կանխարգելմանը, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

**4. Գյուղատնտեսական արտադրանքի և գյուղացիական տնտեսությունների մրցունակության գնահատման մեթոդները, չափանիշներն ու ցուցանիշները** - Գյուղացիական տնտեսությունների մրցունակության գնահատման նպատակով իրականացվել է տնտեսությունների կողմից իրացման միջին գների վրա ազդող գործոնային վերլուծություն, որի համար կատարվել է հետազոտություն (15 տարիների կտրվածքով) և որպես ազդող գործոններ ընտրվել հետազոտական խմբի կողմից մշակված գյուղացիական տնտեսությունների դասակարգման ցուցանիշները: Մասնավորապես՝ կաթի արտադրության գծով՝ 1 կովի միջին կաթնատվությունը, գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակը և կովերի գլխաքանակը, տավարի մսի արտադրության գծով՝ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված տավարի միսը սպանդային քաշով, ապրանքայնության մակարդակը և ԽԵԿ-ի գլխաքանակը, խաղողի, ցորենի և լոլիկի արտադրության գծով՝ գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակը, տարածությունները, ցանքատարածություններն ու համախառն բերքը (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.**

**Ռեգրեսիոն վերլուծության արդյունքային ցուցանիշներ**

|                      | Ռեգրեսիոն մոդելի տեսքը                                            | Կոռելյացիայի ընդհանուր գործակիցը | Դետերմինացիայի գործակիցը               |
|----------------------|-------------------------------------------------------------------|----------------------------------|----------------------------------------|
| Տավարի միս           | $\bar{Y}_i = 1168.65 + 29.719x_{1i} + 21.838x_{2i} - 4.302x_{3i}$ | $R_{x1x2x3} = 0.768$             | $R^2_{y x_1 x_{2\&3}} = 0.590(59\%)$   |
| Կաթի արտադրություն   | $\bar{Y}_i = 111,5 - 0.038x_{1i} + 2,351x_{2i} - 0,062x_{3i}$     | $R_{x1x2x3} = 0.867$             | $R^2_{y x_1 x_{2\&3}} = 0.752(75.2\%)$ |
| Խաղողի արտադրություն | $\bar{Y}_i = -113,6 + 18,383x_{1i} - 0,265x_{2i} + 0,422x_{3i}$   | $R_{x1x2x3} = 0,508$             | $R^2_{y x_1 x_{2\&3}} = 0.258(25,8\%)$ |
| Ցորենի արտադրություն | $\bar{Y}_i = 158,62 + 0,725x_{1i} + 0,171x_{2i} - 1,032x_{3i}$    | $R_{x1x2x3} = 0,437$             | $R^2_{y x_1 x_{2\&3}} = 0.191(19,1\%)$ |
| Լոլիկի արտադրություն | $\bar{Y}_i = 40,147 - 0,030x_{1i} + 4,931x_{2i} + 3,105x_{3i}$    | $R_{x1x2x3} = 0,927$             | $R^2_{y x_1 x_{2\&3}} = 0.860(86,0\%)$ |

Հաշվարկվել է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գների վրա ազդող գործոնների ազդեցության չափը, որը հաշվի առնելով, բացահայտվել է առաջնային արտադրական միավորների մրցունակության փոփոխության գործում իրացման գների և այդ գների վրա ազդող գործոնների ազդեցության աստիճանը դրանց մրցունակության փոփոխության գործում:

**5. Գյուղացիական տնտեսությունների դասակարգում և ինովացիոն պահանջմունքների նախանշում (Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի օրինակով)** – Գյուղացիական տնտեսություններին դեռևս վերապահված է կարևոր դերակատարություն և ամենայն հավանականությամբ փոքր գյուղացիական տնտեսություններն ապագայում էլ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալներում կունենան բարձր տեսակարար կշիռ, ուստի նպատակային է ապրանքայնության մակարդակի և մրցունակության շարունակական բարձրացումը, եկամուտների ավելացումը, արդյունքում պարենային անվտանգության ապահովմանը նպաստելը:

Առաջարկվել է գյուղացիական տնտեսությունների դասակարգման սանդղակ՝ ըստ բնութագրող ցուցանիշների (աղյուսակ 2.):

## Աղյուսակ 2.

### ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի գյուղացիական տնտեսությունների դասակարգման սանդղակ

| Ցուցանիշներ                                                              | Չափման միավոր | C        | C+               | B          | A          | A+         |
|--------------------------------------------------------------------------|---------------|----------|------------------|------------|------------|------------|
| Գյուղ. նշանակության հողեր                                                | հա            | ≤ 0.19   | 0.2-0.99         | 1-4.99     | 5-14,99    | ≥ 15       |
| Անասնազվիսաքանակ                                                         | պայմ. գլուխ   | 2,8-21,8 | 24,1-46          | 48,8-70    | 72,8-109,2 | ≥ 112      |
| ԽԵԿ                                                                      | -/-           | 1-2      | 3-4              | 5-7        | 8-9        | ≥ 10       |
| ՄԵԿ                                                                      | -/-           | 0,6-5,4  | 5,5-12           | 12,6-18    | 18,6-29,4  | ≥ 30       |
| Խոզեր                                                                    | -/-           | 0,6-2,4  | 3-6              | 6,6-9      | 9,6-11,4   | ≥ 12       |
| Թռչուններ                                                                | -/-           | 0,6-12   | 12,6-24          | 24,6-36    | 36,6-59,4  | ≥ 60       |
| Ապրանքայնության համընդհանուր մակարդակ                                    | տոկոս         | ≤ 33     | 34-50            | 51-80      | 81-95      | ≥ 95       |
| Հիմնական միջոցների առկայություն (վարի, ցանքի և այլ ագրեգատներ, բեռնատար) | հատ           | -        | -                | ≤ 1        | ≥ 2        | ≥ 3        |
| Տնտեսության փոխգործակցելու ձևերը                                         | -             | -        | Բանավոր համաձայ. | Պայմանագիր | Պայմանագիր | Պայմանագիր |

Ժամանակակից տնտեսական պայմաններում ինովացիոն գործունեությունը համարվում է պետությունների տնտեսական աճն ապահովող գլխավոր գործոններից մեկը, իսկ ինովացիոն ոլորտը՝ զարգացման գերակա ուղղությունը: ՀՀ ագրոպարենային համակարգում նորարարական տեխնոլոգիաների ներդրումը դեռևս սաղմնային փուլում է և նորարարական լուծումները հիմնականում հատվածաբար են կիրառվում: Դրանց առավել արդյունավետ և լայնամասշտաբ կազմակերպման էական խոչընդոտներն են անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների բացակայությունը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների գիտելիքների ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, ինչպես նաև՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման փորձի պակասը և գոյություն ունեցող լավագույն փորձի օրինակների տարածման ու հանրայնացման ցածր մակարդակը:

**6. Ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների վերլուծությունը և գյուղացիական տնտեսություններում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները** - Մշակված «Գյուղացիական տնտեսությունների ինովացիոն տեխնոլոգիաների ձեռք բերման և ներդրման խնդիրները, ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները» հարցաթերթիկի օգնությամբ իրականացվել է հեռախոսային հարցախույզ Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի շուրջ 50 գյուղացիական տնտեսությունների շրջանակներում, որի արդյունքում դուրս են բերվել տնտեսություններում ներդրումների վրա առավել ազդող գործոնները և ինովացիոն տեխնոլոգիաների ձեռքբերման խնդիրները:


Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ, ըստ առաջարկվող գյուղացիական տնտեսությունների դասակարգման սանդղակի, C և C+ խմբերում ընդգրկված գյուղացիական տնտեսությունները վարվում են հիմնականում էքստենսիվ եղանակով, բացառությամբ Արմավիրի մարզում գտնվող որոշ պտղաբուծական և խաղողագործական տնտեսությունների (գործող տնտեսությունների 57-59% ունի մինչև 0,1 հա տնկարկ), որոնք կիրառում են քիչ քանակությամբ ինտենսիվ տեխնոլոգիաներ (մասնավորապես՝ կարկտապաշպան ցանցեր, կաթիլային ոռոգում): Ներդրումներ քիչ կատարելու պատ-

ճառները պայմանավորված են ֆինանսական սուղ միջոցներով և դրանց ձեռքբերման դժվարություններով:

В խմբում ընդգրկված գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսության վարման ընթացքում անհրաժեշտ տեխնիկայի մի մասը լրացվում են ծառայություններ մատուցող տնտեսավարողների կողմից: Նշված տնտեսություններն ավելի ապրանքային են և փորձում են արտադրությունում կիրառել ինտեսիվ տեխնոլոգիաներ՝ մասնակցելով պետական աջակցության ծրագրերին: Ներդրումների իրականացման վրա ազդեցում են հիմնականում տնտեսության ցածր եկամտաբերությունը, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման գիտելիքի և փորձուսուցման պակասը:

А և А+ խմբերում ընդգրկված գյուղացիական տնտեսություններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն դրանք օգտագործել սեփական տնտեսություններում, այլ ծառայություններ մատուցել մյուս խմբերում գտնվող տնտեսավարողներին: Ծառայությունների մատուցումն ու տնտեսությունների միջև այլ փոխհարաբերություններն իրականացվում են պայմանագրերի միջոցով: Նշված խմբերի տնտեսություններն ունեն ամենաշատ պահանջն ինովացիոն տեխնոլոգիաների նկատմամբ, որին խոչընդոտում է հատկապես նրանց վարկային պարտավորությունների ծանրաբեռնվածությունը:

Գյուղացիական տնտեսություններում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման խթանման համար անհրաժեշտ են համակարգային լուծումներ: Ինովացիոն համակարգի ստեղծման և զարգացման համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կառուցվածքում կարելի է ձևավորել ինովացիոն, խորհրդատվական կատվական գործունեության համակարգման, կազմակերպման, կադրերի վերապատրաստման, իրավական, արտաքին տնտեսական քաղաքականություն իրականացնող կենտրոն:



**Գծ. 1. Ագրարային ինովացիոն խորհրդատվական կատվական կենտրոնի կազմակերպական գործառույթների սխեմա**

Կառույցի հիմնական նպատակը պետք է լինի ՀՀ-ում միասնական համակարգված ինովացիոն, խորհրդատվական կատվական գործունեության և նոր տեխնոլոգիաների ձեռքբերման ու տրանսֆերտների կազմակերպման արտաքին տնտեսական քաղաքականության իրականացումը, առաջավոր փորձի ընդգրկումն ու հարմարեցումը տեղական արտադրության պայմաններին, օպերատիվ կերպով արտադրողների շրջանում դրա տարածումը: Կառույցը գիտական կենտրոնների, համալսարանների, ցուցադրական տնտեսությունների հետ համատեղ կձևավորի արտադրողների մի շերտ, որոնք կօժանդակեն ինչպես նոր տեխնոլոգիաների տարածմանը, այնպես էլ հայրենական ագրարային

գիտության զարգացմանը: Տնտեսավարողները պետք է ունենան մասնակցողականություն նոր տեխնոլոգիաների փորձարկմանը, ծանոթանան արդյունքներին և հետադարձ կապի ապահովմանը:

ՀՀ առանձնահատկություններից ելնելով՝ ագրոինովացիոն քաղաքականություն նախաձեռնելիս կամ մշակելիս պետք է լրջագույնս գնահատվի առկա ագրոինովացիոն ներուժը, կառույցների և ինստիտուտների, գիտական ներուժի առկայությունը, գործունեությունների ուղղվածությունը, ինտեգրվածության աստիճանը և հետազոտական ավարտական աշխատանքների ընդգրկվածությունը, արդյունավետությունը, ներդրման արդյունքն ու հետազոտությունը, գյուղացիական տնտեսությունների մրցունակության վրա ազդեցությունը և այլն: Այս պարագայում, ըստ էության, հարկավոր է գնալ ագրոգիտական, կրթական, խորհրդատեղեկատվական ոլորտի կառուցվածքային և գործունեության բարելավման բարեփոխումների՝ առանցքում չդնելով զուտ մեխանիկական միացումներն ու միաձուլումները: Խնդիր պետք է դրվի անցյալում թույլ տրված բացերի վերհանմամբ ու քաղած դասերը, առաջավոր փորձը հաշվի առնելով՝ ձևավորել օպտիմալ կրթա-գիտական-խորհրդատեղեկատվական հզոր և միաժամանակ օպտիմալ կառուցվածք, որի գործունեությունը կբխի գյուղատնտեսությունում առաջնային արտադրական միավորների արտադրությանը նպաստելու և մրցունակ դարձնելու նպատակներից:

Ագրարային ինովացիոն ոլորտում գիտա-խորհրդա-տեղեկատվական ոլորտի առաջնահերթություններից պետք է լինեն՝

- գյուղացիական տնտեսությունների ղեկավարների և անդամների միջնակարգ, մասնագիտական և բուհական մակարդակով ուսուցումներին ներգրավվածության ապահովումը,
- գյուղական վայրերում գյուղացիական տնտեսությունների միավորման մոտիվացման ձևերի ներգրավումը կամ մոտիվացվածության բարձրացումը,
- գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների պարտադիր ներգրավումը խորհրդատեղեկատվական և ինովացիոն գործընթացներում,
- ինովացիոն տեխնոլոգիաների օգտագործման նպատակով հանրակրթական հիմնական ծրագրերում դաշտային ուսուցումների ներդրումը,
- համապատասխան գիտական կենտրոնների գիտնականների և դասախոսների ներուժի օգտագործումը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կատեգորիայի աշխատողների տարեկան ծանրաբեռնվածության մեջ խորհրդատվական գործունեության որոշակի ժամաքանակ է նախատեսվում: Հետևաբար անհրաժեշտ է իրավական հիմքեր ստեղծել ՀՀ-ում ևս այդ պրակտիկան կիրառելու համար,
- աշխատակիցների շարունակական վերապատրաստումների կազմակերպումը,
- մասնագիտացված գյուղատնտեսական հեռուստահաղորդումների ծավալների ավելացումը,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը:

ՀՀ ագրոպարենային համակարգի ինովացիաների ստեղծման և զարգացման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան օրենսդրական, իրավական դաշտ, մասնավորապես՝ մշակել «Ագրարային ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման մասին» ՀՀ օրենք, որով կհստակեցվի ոլորտում ընդգրկված բոլոր օղակների գործառույթները, թվային գյուղատնտեսության ռազմավարությունը կամ հայեցակարգը: Մարզային կտրվածքով մշակել գյուղատնտեսական առաջնահերթ նորամուծությունների քարտեզ և

միջոցառումների ծրագիր ու տարեկան բյուջեով սահմանել հատկացվող ֆինանսական միջոցները և իրականացնել ցուցադրական ծրագրերի, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացման համար նախատեսված նորարարական դրամաշնորհներ և վարկային աջակցության ծրագրեր: Նման ծրագրերի իրականացումն ու կառավարումը պետք է իրականացվի եռամսկարդակ համակարգով՝ պետական, տարածքային, մասնավոր:

**7. Իրավաօրենսդրական ակտերի, ոլորտի զարգացման պետական հասցեկան ծրագրերի, հողային հարաբերությունների, տնտեսավարող սուբյեկտների միջև կոոպերացման, կլաստերային մոտեցումների կիրառման, գնագոյացման, հարկային, վարկային, ապահովագրական գործոնների ուսումնասիրությունն ու բացերի վերհանումը** - ՀՀ-ում գործող գյուղացիական տնտեսությունների մրցունակության բարձրացումը պայմանավորում է մի շարք գործոններով և միայն համալիր կերպով դրանց վերհանումը, ազդեցության գնահատումը և ծառացած խնդիրների լուծման ուղիների առաջադրումը կարող է տանել բիզնես մտածելակերպի և ժամանակակից պայմաններին համապատասխանող մոդելային տնտեսությունների ձևավորմանը:

Գյուղացիական տնտեսությունների մրցունակության բարձրացումն առավելապես կախված է պետության կողմից իրականացվող պետական կարգավորման մեթոդներից և գործիքներից: Մեր մեկնաբանմամբ **ագրարային ոլորտի պետական կարգավորումը համակարգված միջոցառումների ամբողջություն է, որն ապահովում է արտադրության ծավալների ավելացում և ոլորտի կայուն զարգացում:** Այլ կերպ ասած՝ պետական կարգավորումը ենթադրում է պետության կողմից ուղղակի և անուղղակի մեթոդների կիրառմամբ իրականացվող գործընթաց, որը պետք է նպաստի գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դրանց կայուն զարգացմանը, սոցիալական կայունության ապահովմանը, հետեվաբար մրցունակության բարձրացմանը: Ըստ այդմ առանձնացվել են գյուղացիական տնտեսությունների պետական կարգավորման իրավական, վարչական, տնտեսական մեթոդներ:

Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում իրականացված վերլուծությունների արդյունքում վեր են հանվել գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների մրցունակության վրա ազդող գործոնները, որոնք ներկայացվել են **«ՀՀ առաջնային արտադրական միավորների գործունեության վրա ազդող գործոնների վերլուծության և մրցունակության բարձրացման առաջարկությունների» մատրիցում**, որտեղ դիտարկվել են գյուղացիական տնտեսությունների մրցունակությանը խոչընդոտող գործոնները, որոնք դասակարգվել են ըստ պետական կարգավորման հետևյալ մեթոդների՝

- **Իրավական** - իրավաօրենսդրական ակտերի առկայություն, հարկային համակարգ:
- **Տնտեսական** - գյուղատնտեսության զարգացման պետական հասցեկան ծրագրերի հասանելիություն, վարկային քաղաքականություն, տնտեսավարող սուբյեկտների միջև կոոպերացման, կլաստերային մոտեցումների կիրառում, ապահովագրական համակարգ:
- **Վարչական** - գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման մակարդակ, գնագոյացման առանձնահատկություններ, կրթություն ու զբաղվածության մակարդակ:

Իրականացվել է մրցունակության վրա ազդող նշված գործոնների ազդեցության գնահատում՝ կիրառելով զույգերի համեմատական մեթոդը:

**Գյուղատնտեսական արտադրական առաջնային միավորների մրցունակության  
բարձրացման վրա ազդող գործոնները և գնահատման արդյունքները**

| Գործոններ                                                           | Գնահատում | Ազդեցությունը<br>գյուղացիական<br>տնտեսություն-<br>ների վրա |
|---------------------------------------------------------------------|-----------|------------------------------------------------------------|
| Իրավաօրենսդրական ակտերի առկայություն                                | 2,53      | Առավել բարձր                                               |
| Պետական աջակցության ծրագրերի հասանելիություն                        | 1,32      | բարձր                                                      |
| Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման մակարդակ | 1,10      | բարձր                                                      |
| Մասնագիտական կադրերի ներգրավում                                     | 0,93      | միջին                                                      |
| Հարկային համակարգ                                                   | 0,78      | միջին                                                      |
| Կոոպերացման հնարավորություններ                                      | 0,74      | միջին                                                      |
| Ապահովագրական համակարգի շարունակականության ապահովում                | 0,68      | միջին                                                      |
| Գնագոյացման առանձնահատկություններ                                   | 0,48      | ցածր                                                       |
| Վարկերի հասանելիություն և մատչելիություն                            | 0,45      | ցածր                                                       |

Գյուղացիական տնտեսությունների արտադրանքի իրացման գների և ներդրումային միջավայրի վրա ազդող, մրցունակությանը խոչընդոտող գործոնների վերլուծությամբ առաջադրվել են հետևյալ լուծումները.

- ✚ Իրավաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում:
- ✚ Պետական աջակցության ծրագրերի հասցեականության բարձրացում, համալիր ծրագրերի կիրառում:
- ✚ Վարելահողերի նպատակային օգտագործման հայեցակարգի և օրենքի մշակում, արոտավայրերի արդյունավետ օգտագործման ծրագրերի իրականացում:
- ✚ Տնտեսությունների ինտեգրացման նպատակով կոոպերացման գործուն ձևերի կիրառում, կլաստերային քաղաքականության ներդրման ճանապարհային քարտեզի ներկայացում:
- ✚ Մեծածախ շուկաների, բաշխման և հավաքման կետերի կիրառմամբ՝ իրացման համակարգի ձևավորում, ներմուծման ազատականացված քաղաքականության վերանայում:
- ✚ Հարկային ճկուն համակարգի մշակում և արտոնությունների սահմանում:
- ✚ Գյուղատնտեսական վարկերի տրամադրման տարբերակված քաղաքականության կիրառում՝ պայմանավորված գյուղացիական տնտեսությունների չափերով և արդյունավետության ցուցանիշներով, երկարաժամկետ համալիր վարկերի տրամադրում, տեղեկատվական հարթակի և հեռախոսային հավելվածների ստեղծում:
- ✚ Ապահովագրական պիլոտային ծրագրից անցում հիմնական համակարգի՝ գյուղատնտեսության ապահովագրության պրոդուկտ առաջարկող ընկերությունների գործունեության խթանման նպատակով արտոնությունների տրամադրում, ապահովագրական ընկերություն – բարձրագույն կրթական հաստատություն համատեղ մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և իրականացում:
- ✚ «Գյուղատնտեսական կրթությունը համայնքների համար» պետական աջակցության ծրագրի մշակմամբ, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում և կենսաթոշակային համակարգում համապատասխան փոփոխությունների կիրառմամբ՝ գյուղացիական տնտեսությունների մրցունակության բարձրացում:

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների մրցունակությանը խոչընդոտող գործոնների դիտարկումը և առկա բացերի վերհանումը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում իրականացվող ագրարային քաղաքականությունը պետք է ունենա լիրաժեք հովանավորչական բնույթ և այն գլխավորապես ուղղված լինի գյուղացիական տնտեսությունների մրցունակության բարձրացմանը՝ նպաստելով գյուղատնտեսությունում դիվերսիֆիկացման խորացմանը: Տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացման կարևոր գործոն է մոդելային (ըստ առանձին գործոնների) օպտիմալ տնտեսությունների հայեցակարգային մոտեցումների, չափերի սահմանումը, հատկապես ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ: ՀՀ ուղղահայաց գոտիականությունը և գյուղատնտեսության մասնագիտացման առանձնահատկություններն ուղղորդում են իրականացնել տարբերակված ագրարային քաղաքականություն և հետևաբար, մոդելային (օպտիմալ) գյուղացիական տնտեսությունների ներդրում, որը կարող է դառնալ «լոկոմոտիվ»՝ ոլորտի կայուն զարգացման և մրցունակության բարձրացման համար: